ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2008 թվականի դեկտեմբերի 26-ին

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 63. Քաղաքապետի լիազորությունները սոցիալական պաշտպանության բնագավառում

1. Սոցիալական պաշտպանության բնագավառում քաղաքապետն իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունը.

1) կազմակերպում է քաղաքային սոցիալական ապահովության հաստատությունների և կազմակերպությունների գործունեությունը:

~~2. Սոցիալական պաշտպանության բնագավառում քաղաքապետն իրականացնում է հետևյալ պատվիրակված լիազորությունը.~~

~~1) աջակցում է պետական սոցիալական ապահովության ծրագրերի իրականացմանը:~~

(63-րդ հոդվածը փոփ. 04.10.17 ՀՕ-137-Ն)

Հոդված 99. Վարչական շրջանի ղեկավարի լիազորությունները աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառում

1. Վարչական շրջանի ղեկավարը աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացնում է հետևյալ լիազորությունները.

~~1) իրականացնում է սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության հաշվառումը, իրականացնում է մարդասիրական օգնության բաշխումը.~~

2) աջակցում է գործազուրկների հաշվառման և բնակչության զբաղվածության հետ կապված խնդիրների լուծմանը.

~~3) վարչական շրջանի տարածքում կազմակերպում է սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրումը և տեղական ինքնակառավարման մարմինների՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների գործունեությունը:~~

(99-րդ հոդվածը լրաց., փոփ. 17.12.14 ՀՕ-233-Ն)